Կրթական կայքեր

<<Ես և Համացանցը>> նախագծային աշխատանքի վերջնարդյունք

Դասարան՝ 7

Առարկա՝ ԹԳՀԳ

Ուսուցիչ՝
Մարինե Առաքելյան

Գեղարքունիքի մարզ
Ակունքի միջնակարգ դպրոց

Համացանցը գործիք է ճիշտ օգտագործողների ձեռքին:

ԱՅՍՏԵՂ ԿԾԱՆՈԹԱՆԱՔ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻՆ

ԿԶՆԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հիմնադրամի նպատակն է՝ խթանել կրթության ոլորտի զարգացումը և արդիականացումը՝ ի նպաստ սովորողների որակյալ կրթության ապահովմանը, առողջության և սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, մրցունակ անձի ձևավորմանը և ինքնիրացման աստիճանի բարձրացմանը, կրթական մասնագիտական ներուժի զարգացմանը:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հայաստանի դպրոցների ինտերնետային համալիր էջը՝ «Կրթական համալիր էջ» պորտալը ստեղծվել է Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի և Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակի ձևավորած պատվերի շրջանակներում 2007թվականին և հանձնվել է շահագործման «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (ԿՏԱԿ):

ՔԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Քան ակադեմիան տալիս է անհատականացված ուսում, Սովորողներն առաջ են շարժվում իրենց ցանկալի արագությամբ՝ սկզբում լրացնելով բացերը և աստիճանաբար ավելի արագ սովորելով:

ԱՐՄԱԹ

«Արմաթ» կրթական ծրագրի նպատակն է ուժեղացնել Հայաստանում տեխնիկական կրթության բազան: Կայքում առկա են էլ ուսուցման համար անհրաժեշտ բոլոր տարրերը:

ԻՄ ԴՊՐՈՑ

ԻմԴպրոցն օգնում է ուսուցիչներին դասավանդման գործընթացում: Այն հնարավորություն է տալիս էլեկտրոնային եղանակով աշակերտներին հանձնարարել դասարանային ու տնային աշխատանքներ և ստուգել դրանք: Աշակերտների համար այն առաջադրանքների էլեկտրոնային շտեմարան է և անսահման վարժանքների հարթակ:

ESOURCE.ARMEDU.AM

Կրթական կայքը իր մեջ ներառում է բնագիտական առարկաների/Քիմիա, Ֆիզիկա, Երկրաչափություն, Կենսաբանություն/ վերաբերյալՑուցադրություններ, լաբորատոր աշխատանքներ, գործնական աշխատանքներ:

TESCHOOL

Կրթական կայք է, որտեղ առկա են դասընթացներ տարբեր բնագավառներից: Առկա են դասընթացներ թե՛ վճարովի, թե՛ անվճար տարբերակով:

COURSERA

Courseran ևս կրթական կայք է: Կայքը տալիս է բավականին լայն հնարավորություններ: Այստեղ առկա են մի շարք դասընթացներ, որոնք ավարտելով կարող եք արժանանալ հավաստագրերի:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ